

սերական Դիւանին : Եւ Եղարքոսն դարձեալ առաքեաց զայս խնդիր յարդարութեան ատեանն, ուր 'ի քննութեան որոշեցաւ, սենեակքն մշտնջենաւոր էին նախ քան զհրդեհն, ընդդիմանալ Յունաց շինութեանց նոցին, է գործ մեծի գրկանաց հակառակ օրինաց եւ հրամանի, պարտ է վերատին հարցանել 'ի տեղւոյն իւրմէ :

Ի վերայ այս դրեաց Եղարքոսն առ Բղեշխն Երուսաղէմի Մէհէմէտ Փաշա, բացատրելով զխնդիրն զոր դրեցաք. եւ 'ի վերջոյ ասէ. Առեալ ընդ քեզ զերեւելիս քաղաքիդ, զՓոխանորդս եւ զԹարգմանս երկուց ազգաց, օրինօք Շէրիի եւ գիտութեամբ ամենեցուն զխնդիրն վերըստին առնուլ 'ի քննութիւն եւ ստուգել, յորոց վերայ է վէճն. եթէ արդարեւ սենեակքն 'ի Ս. Յարութեան նախ քան զհրդեհն էի՞ն՝ թէ ոչ. յառաջագոյն Յոյնք հաճեալ եւ 'ի վերջոյ արդեւեալ են մուծանել զայն յարձանագիր, որպէս պատմէ Նէպի Էֆէնտի. զայս ամենայն քննութեամբ ստուգեալ 'ի հաւատարիմ արանց, զի մի վերատին հարցման կարօտ լիցի. զճշմարտութիւն իրին բացայայտ եւ պարագայիւք Իլամաւ Դատաւորին, եւ հանրագրութեամբ եւ ձեր իսկ գրով ծանուցիք աստ. երբէք մի լիցի ձեզ պաշտպանել զմին եւ զմիւսն, եւ կամ զիջանել 'ի հաճոյս եւ 'ի շնորհուկս ուրուք. զի մի վերատին արծարծեսցի վէճն. յուսամք թէ աջարջութեամբ կատարէք զայս, 'ի ՎՋ Զիլգատէ. 1771 (Րատւֆ) :

Վերջին որոշում. քակել զերկու երկայն աստիճանս, եւ շինել ըստ առաջնոյն. զոյգ աստիճանաց որ հանէ 'ի վանս Յունաց, մնալ այնպէս, զի չէ մնասակար : Յոյնք ոչ կամեցան տալ զբանալի հիւոխային դրան պատճառելով զԹափօրն. իսկ բանալի արտաքին դրան, որոյ մին էր 'ի ձեռս Հայոց եւ միւսն Յունաց մինչ 'ի թուականն 1771, Գործակալք յանձն առին զեկուցանել Արքայի, եւ պատուէր ետուն Հայոց չգործածել զբանալին մինչ 'ի գալուստ նոր հրամանի : Շինութիւն սենեկաց, կախեալ է Կոյսերական կամաց եւ վերատեսչին շէր հարկ մնալ յերուսաղէմ, զի աւարտեալ էր գործ նորագութեան, եւ պատուէր ետ առանց հրամանի չլինիլ ձեռնամուխ 'ի շինութիւնս, եւ մեկնեցաւ 'ի Կոստանդինուպօլիս. այսպիսի հրաման եղև 'ի